


յալթեվան հոչակաւոր ուխտ Սկեւոա, ա-
ռաջի սրբոյ եւ սքանչելագործ Նշանի եւ
փրկչին տաճարի»: Առաջին ծանօթ տեղիքն
է այս, որ կը յիշէ Մլիճի վանքը: Վանքին
գիրքը նման Յիշատակարանիս, բայց աւելի
ճշգրիտ արտայայտութեամբ կը նշանակէ
Մատթէ քահանայ 1283ին¹³:

«յանապատէ հոչակելի,
որ յորջորջի յանուն Մլիճի,

Մլիճի վանքէն ոչ շատ հեռու «սուրնթեր
անձատոյց բերդին Լամբրունի» կը գտնուի
Սկեւոայի վանքը, որ նշանաւորապէս հան-
դիսացաւ յատկապէս ժԲ. դարու երկրորդ
կէսէն յետոյ, Ներսէս Լամբրոնացւոյ օրով-
եւ պահեց իւր հոչակը նաեւ այնուհետեւ
աւելի քան դար մը (հմմտ. Ս ի ս ու ա ն,
էջ 97—107):

Սկեւոայ այս մէկու կէս դարու ընթաց-
քին նկատուեցաւ ոչ միայն կենդրոն գրա-



Նկար 5. Սկեւոայի Աւետարան, 1197:

է ի սուրբորն Տաւրոսի
լերին մեծի եւ անուանի.
Մերձ ի գղեակ Պապիոսի,
առ սահմանօքն Տարսնի¹⁴»:

¹³ Իսկապէս կը գտնուի Վիեննայի Մխիթարեան
Մատենադարանի Թ. 571, 208 բ. առկէ արտագրուած
է նոյնը Թ. 382ի մէջ: Նոյնը յտաւջբերուած նաեւ
Սիսուան, էջ 74:

¹⁴ Պապիոսն բերդի եւ Մլիճի վանքին մասին
տե՛ս ընդարձակ Ս ի ս ու ա ն, 70—74:

կան շարժման, այլ եւ արուեստանոցը հայ
գրչութեան արուեստին:

Գրչութեան արուեստի հետ զարգացաւ
հոն նաեւ մանրանկարչութեան արուեստը:
Գրչագոր Մլիճեցւոյ Ժամանակակից կը գտնենք
անուանի նկարիչ-գրիչը Կոստանդին (հմմտ.
Ս ի ս ու ա ն, էջ 84/85 եւ 99):

(Շարունակելի):

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

† ՈՒՍՈՒՅԶԱՊԵՏ ՅՈՎՍԷՓ ՄԱՐԿՈՒԱՐՏ

Անհուն ցաւով իմացաւ խմբագրութիւնս տեղական թերթերէն ուսուցչապետ
Յ. Մարկուարտի արկածական մահուան դժբախտ բօթը:

Մեծ կորուստ է հայագիտութեան համար այս մահը: Ոչ միայն հայագիտական
ասպարէզի վրայ հոչակուած էր Մարկուարտ, այլ եւ իրանագիտութիւնը եւ առ
հասարակ արեւելագիտութիւնը ողջունած էր իր մէջ հմուտ եւ արդիւնաւոր գիտ-
նական մը:

Ժողովաւաւ էր իր ծանօթութիւնը արեւելեան ժողովուրդներու աշխարհագրա-
կան, լեզուական եւ պատմական իրերուն: Եւ սուր միտքը իր գրչին տակ կը ճառա-
գայթէր լուսաւորելու հին պատմութեան մութ խորշերը:

Հանգուցեալը իր ուսումնասիրութեանց առարկայ ըրած էր հայագիտութիւնը
ոչ միայն իբրեւ բանա-
ւէր, այլ եւ նուիրուած
էր այդ ուսմանց իբրեւ
մեծ հայասէր եւ բարե-
կամ հայ ժողովուրդին:
Իր բողոքը համաշխար-
հական պատերազմի
ընթացքին Հայ ժողո-
վրդեան եղած անիրա-
ւութեան դէմ արտա-
յայտած էր նա տար
սրտով «Հայագրին ծագ-
ման» նուիրած աշխա-
տութեան վերջաբանին
մէջ. եւ հպարտ էր նա
իւր բողոքին վրայ, թէ-



եւ այն հեռացուց իրմէ
սրտակից բարեկամներ,
նոյն իսկ իւր հայրենա-
կիցներու շարքին մէջ:

Դժբախտաբար հան-
գուցեալին կարգ մը
կարեւոր աշխատու-
թիւնները, որոնք կը շո-
շափեն Հայոց Աշխարհն
եւ Պատմութիւնը, կը
մասն դեռուս անտիպ:
Խմբագրութիւնս ըստ
հնարաւորութեան պի-
տի հոգայ ձեռք բերել
զանոնք եւ իւր ինձամ-
քին տակ լոյս ընծայել:

Südarmanien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen
այսինքն «Հարաւային Հայաստան եւ Տիգրիսի աղբերակունքը յոյն եւ արաբացի
աշխարհագիրներու համաձայն», մեծ աշխատութիւնը, զոր հանգուցեալը արդէն
1911ին դրած էր խմբագրութեանս տրամադրութեան տակ, եւ սկսած էր
տպագրուիլ մաս առ մաս «Հանդիսի» էջերու մէջ, ընդարձակուած եւ նոր յաւե-
լուածներով ճոխացած լոյս պիտի տեսնէ շուտով Մխիթարեան տպարանէն (8⁰,
իբր 700 էջ): Հեղինակին աշխատածուր խափան եղած էր գործիս տպագրութեան
այսքան երկարաձգման:

Խմբագրութեանս առանձին խնդրանքով հանձնեցաւ Պր. Ա. Աբեղեան գրել
«Հանդիսի», համար ակնարկ մը հանգուցեալի գրական գործունէութեան վրայ,
զոր ուրախութեամբ կը ներկայացնենք մեր ընթերցողներուն:

Խմբ. «ՀԱՆԴԻՍ ԱՄՍՕՐԵԱՅ» ի: